

N / N	ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԹԵՐԹ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ)		
1	Աշխատանքային գծագրերի ցանկ ,	ԳՇ - 1
2	Առաջին հարկի հատակագիծ /չափագրություն/	ԳՇ - 2
3	Երկրորդ հարկի հատակագիծ /չափագրություն/	ԳՇ - 3
4	Առաջին հարկի հատակագիծ /նախագծային/	ԳՇ - 4
5	Երկրորդ հարկի հատակագիծ /նախագծային/	ԳՇ - 5
6	Պատուհանների մասնագիր	ԳՇ - 6
7	Պատուհանների և դռների մասնագիր	ԳՇ - 7
8	Դռների մասնագիր	ԳՇ - 8
9	Հատակների մասնագիր	ԳՇ - 9
10	Հարդարման աշխատանքների մասնագիր/առաջին հարկ/	ԳՇ - 10
11	Տանիքի հատակագիծ	ԳՇ - 11
12	Տանիքի կոնստրուկցիոն հատակագիծ	ԳՇ - 12
13	Տանիքի կտրվածք 1- 1, հանգույցներ	ԳՇ - 13
14	Տանիքի հանգույց-1 Պաշտպանիչ ճաղաշար	ԳՇ - 14
15	Տանիքի մասնագիր վերակառուցվող տեղամաս-1	ԳՇ - 15
16		ԳՇ - 16
17	Տանիքի մասնագիր/վերակառուցվող տեղամաս-2	ԳՇ - 17
18	Առաջին հարկի ուժեղացվող տեղամաս	ԳՇ - 18
19	Պատերի ուժեղացման սխեմա	ԳՇ - 19
20	Ուժեղացման նյութերի մասնագիր	ԳՇ - 20
21	Թեքահարթակ Թ-1	ԳՇ - 21
22	Թեքահարթակի նյութերի մասնագիր	ԳՇ - 22
23	Շվաքարանի հատակագիծ	ԳՇ - 23
24	Շվաքարանի կտրվածք	ԳՇ - 24
25	Շվաքարանի նյութերի մասնագիր	ԳՇ - 25

ՀՀ Արատաշատի Ա.Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքի վերանորոգման

նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման համար հիմք է հանդիսացել

1. ճարտարապետահատակագծային առաջադրանքը
2. Տեխնիկական բնութագիրը
3. Չափագրությունները

Արտաշատի Ա.Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքը սկսվել է կառուցվել Ալեքսանդր Թամանյանի հաստատված նախագծով 1937 թվականին: Այն հայրենական մեծ պատերազմի սկսման պատճառով մի պահ կանգ է առել,ապա շարունակվել և ավարտվել է 1943 թվականին:Շենքը իրենից ներկայացնում է անհատական նախագծով կառուցված երկհարկանի, որոշ հատվածում եռահարկ հասարակական նշանակության կառույց:Շենքը իրենից ներկայացնում է 40.4*32.2 զաբարիտային չափերով շինություն, որի հիմքերը իրականացված են խամքարաբետոնյա ,որմնախարիսխը քրքատաշ բազալտից է:Պատերը իրականացված են սրբատաշ,քրքատաշ տուֆ քարից 50սմ հաստությամբ: Ծածկերը ձախ հատվածում 2014 թվականին մասնակի վերանորոգման ժամանակ իրականացվել է ե/բետոնե միաձույլ սալից ե/բետոնե շրջանակների վրա: Աստիճանավանդակները նույն թվականին ձախ հատվածում իրականացվել են մետաղական հեծանների վրա հավաքովի ե/բետոնե աստիճաններով աստիճանավանդակ : Աջ հատվածում ծածկերը իրականացված են փայտից,աստիճանավանդակը նույնպես իրականացված է փայտից: Մնացած հատվածներում ծածկերը իրականացված են մոնոլիտ ե/բետոնե սալերից: Տանիքը լանջավոր կազմակերպված ջրահեռացմամբ:Բեմի հատվածում և կենտրոնական հատվածում տանիքածածկը իրականացված է պրոֆիլավոր ցինկա-

պատ թիթեղից, իսկ մնացած հատվածներում տանիքածածկը իրականացված է ասբոշիֆերից:Նախագծով նախատեսված է Բեմահարթակի ետնամասի հիմնակն կրող պատի վրա առկա ճաքը լցվում է ցեմենտային լուծույթով,ապա ընդհանուր պատի

երկարությամբ նախատեսված է տորկրետացում /ներսից և դրսից/ ամբողջ պատի բարձրությամբ:

Տանիքածածկի թեքությունը դահլիճի հատվածում իրականացված է քիչ թեքությամբ: Նախագծով նախատեսված է տվյալ հատվածի քանդում և նոր տանիքի կառուցում նորմերին համապատասխան թեքությամբ:Տանիքի կրող կոնստուկցիաները պետք է

ամրացվեն կառուցվոց ե/բետոնե տակդիրների հետ հեղյուսների միջոցով:
Պատուհանները իրականացվում են ալյումինե 60 մմ հաստությամբ կաղնեգույն: Նախատեսված է բեմահարթակի փայտե հատակների փոխում: